

ԲԱՐԳԵՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԺՈՂՈՎԻ ԹՈՒՄԿԱՆՔ ԵՒ ՏԵՂԼ.

Շատերի համար գուցէ մեր այս յօդուածի վերջնագիրը տարօրինակ կթուի, քանի որ մեր հայեացքն այդ խնդիրների մասին յայտնի է հետաքրքրուողներին¹⁾ և մենք այժմ էլ ոչ մի առիթ չունինք փոխելու մեր արտայայտած կարծիքը։ Մեզ թւում՝ էր, թէ վերջնականապէս պարզուած է, որ Բարգէնը իւր յայտնի ժողովը գումարել է 505/06 թուականին և Դուինում Բայց գուրու է դալիս, որ այդ կասկածի է ենթարկւում Վիեննայի Մխիթարեան երկու հայրերի կողմից, որոնք քաջածանօթ են հայ բանասէրներին և որոնց կարծիքը կարող է նշանակութիւն ստանալ այդ խնդրում։ Կասկածի ենթարկողներն են Հ. Հ. Գաթը ճեան և Ն. Ա. կին եան։

Վերջինս, Վիեննայի Մխիթարեան երիտասարդ ապագայ խոստացող եռանդուն և աշխատասէր բանասէրներից մէկը, «Հանդէս ամսօրեայի» սոյն 1908 թուականի յունիս տետրակում մի աշխատութիւն է սկսել տպագրել «Կիւրիսն կաթուղիկոս Վրաց. պատմութիւն հայ—վրական յարաբերութեանց եօթներորդ գարու մէջ» վերնագրով (էջ 166—172)։ Այդ յօդուածի մէջ խօսելով Զենոնի Հենոտիկոնի ընդունելութեան մասին (Հանդէս, էջ 169), ասում է. «Բարգէնն էր այն ժամանակ Հայոց կաթուղիկոսը (506/07—512/13)։ Պատասխանելու համար կայսեր խնդրանքին ու Հենոտիկոնին, գումարուեցաւ ժողով մը» «Գումարման

1) Հմատ. մեր Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen, 1904, էջ 31—39.

տեղն այս անգամ Դուին Հայոց ոստանն եղած չէ. Համ
նոր-Քաղաքը, այսինքն Վաղարշապատ Մայր Եկեղեցւ
մէջ, անշուշտ ասիկա աւելի կենդրոնական ըլլալով Վրաս
տանէն, Աղուանից և Սիւնեաց երկիրներէն գալու եպիս
կոպոսաց համար։ Այս տողերին ապա աւելացնում է
հետեւեալ ծանօթութիւնը. «Կայութէան Հ. Յ.—իրաւախոհ,
կեղծիքը և այլն, Բ. (անտիպ)։ Հմմտ. Յովհ. պատմաբան,
36. «Բարգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց
և Աղուանից ինոր Քաղաքի ի Սուրբ կաթողիկէին ի մայրն
Եկեղեցեաց Հայոց։ Տէ՛ Միասնակց Ե. Հ. Die armen. Kirche,
թ. 32. անիմանալի պատճառաւ Դուին կհամարի ժողովա-
տեղին։ Այս մասին տես մեր մատենախօսականը Հանդ.
Ամս. 1904. Էջ 212».

Այդպիսով մեզ վրայ պարտականութիւն է ընկնում
բացատրելու, թէ ինչու մենք Դուինն ենք համարում՝ ժո-
ղովատեղին։ Բայց նախ քան մեր բացատրութեանն անց-
նելը, կարեոր է ծանօթանալ Հ. Հ. Գաթըրճեանի և Ակին-
եանի բոլոր պատճառաբանութիւնների հետ։

Մատնացոյց արուած Մատենախօսականի մէջ Հ. Ն.
Ակինեանը (Հանդէս ամս. 1904, Էջ 211—212) խօսում է
Բարգէնի ժողովների (!) մասին և գալիս է հետեւեալ եղ-
րակացութեան. Բարգէնը գումարել է 3 ժողով. առաջինը
տեղի է ունեցել Կաւատայ Ժ. տարին, Այդ
թուականի համար էլ Հ. Ակինեանը կասկած է յարուցա-
նում՝ հետեւեալ կերպով (Հանդէս ամսօրեայ 1904, Էջ 42,
«Կաւատայ 18. տարին որոշելու համար պատշաճ կհամա-
րենք Հ. Գաթըրճեանի «Հանդանակ Հաւատոյ» երկին
հրատարակողին սուր և միանգամայն ճիշտ գիտազութիւնն
յառաջ բերել որ ցարդ մեր և այսոց ուշադրութենէն
վրիպած էր. Կաւատ ըստ նորագոյն քննութեանց (ներ-
գեկէ) թագաւորած է 488-ին. ըստ այսմ այս թուղթն
դրուած ըլլալու է 506-ին. Ուկայն Կաւատայ թագաւո-
րութիւնն իրը 4 տարի ընդհատած է Զամասպայ տպը-
տամբութեամբն՝ յամին 496. Արդ ինդիր կրնայ յառնել
թէ ինչպէս կհաշուէին Հայք Կաւատայ թագաւորութեան

տարիներն. արդեօք այս 4 տարին իւր կառավարութեան թուականէն կհանէին, թէ մէկտեղ կգումարէին. Հիմակուան ժամանակս յայտնի բան է և որոշ գիտենք, թէ ինչպէս գործածած են Պարոկաստանեալք և մեր Հայք. այսինքն թողլով մէկդի Զամասպայ թագաւորութեան 4 տարին, հաշուելով միայն իւր կառավարութեան տարիները, Բոտ այսմ՝ Կաւատայ ԺԸ, տարին կըլլայ 510 ։ Իւր կողմից այս, ինչպէս յետոյ կտեսնենք, միանգամայն սխալ դատողութեանն ու հաշուին Հ. Ե. Ակինեանն աւելացնում է (Հանդաւմ, ամս. 1904, էջ 211 շար.). « Բոտ այսմ պէտք է ենթագրել թէ Բարգէնի Ա. թղթին մէջ յիշուած ժողովն զումարուած է 510-ին. Բարգէնի Բ. թղթի մէջ և կտեսնուի ժողով մը. որովհետեւ թուղթը կառարուի կաթուղիկուէն, եղիսկոպոսներէն « ըստ գաւառաց և ըստ տանց, յամենայն ուխտէ ո. եկեղեցւոյ մերոյ և յիշխանաց Վարդայ Մամիկոնից Տեառնէ և ի Հայոց մարզպանէն» և այլն. Գրութեան ժամանակն առաջիննամակէն շատ ուշ չերեար, որովհետեւ Վարդ տակաւին կենդանի է, որ ըստ Սերէսի ռուակաւ ինչ ժամանակ ապրեցաւ. Ուրեմն կարելի է դնել 514—515-ի մէջ երը ։ Ապա յիշելով, որ մի Պ. թուղթէլ պայման նամակ կաշուած, գրած պիտի լինի Բարգէն կաթուղիկոսը Վրաց հետ միասին Քաղկեդոնի ժողովի և Լեռն պապի տումարի դէմ (Գիւք թղթոց էջ 165, 182—183) ուր շեշտուած է եղել Հայերի և Վրացիների միարանութիւնը, աւելացնում է. « Արդ՝ որովհետեւ այս թուղթն գրուած է ժողովի մը մէջ, ուր ներկայ գտնուած են Հայոց, Վրաց, Աղուանից կաթուղիկոսք ևս, և նզոված են Քաղկեդոնի Ա. ժողովն ու Մեծին Լեռնի տումարը « Զենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց, թղթոյն համեմատ, չի կրնար այս ժողովն նոյն ըլլալ Ա. և Բ. թղթոց մէջ յիշատակուած ժողովոց հետո ժողովը գումարուած կերեայ Ա. և Բ. ժողովներու մէջ տեղը, իր 512—3, վասն զի Բ. թղթի մէջ Քաղկեդոնի ժողովն արգէն մոլորական կհամարուի և Զենոնի Հենոտիկոնի վարդապետութեան քաջ յարեալ. Բոտ Հ. Գաթը ըրճեանի

Հայք առաջին անգամ հոս ընդունեցան Վրաց և Աղուանից հետ Զենոնի Հենոտիկոնն, որով և Քաղկեդոնի ժողովոյն սահմանն մերժեցին ։ Եւ այս ժողովը գումարուած պիտի լինի ոչ թէ Դուբնում, այլ Վաղարշապատում 512|13 թուին։

Մենք դիտմամբ ընդարձակ կերպով և իւր իսկ խօսքերով մէջ ըերինք պատճառաբանութիւնները, որպէսզի թիւրիմացութեան ոչ մի առիթ չլինի։ Տեսնենք այժմ, թէ որքան հիմք ունին այդ ենթադրութիւնները։

Ամենից առաջ բոլորովին անվիճելի է, որ Կաւատայ ԺԼ. տարին Բարդէնը մի ժողով է գումարել Դուբնում և ոչ այլ տեղ, ինչպէս այդ պարզ կերպով շեշտուած է ժողովական թղթի մէջ. «Ժողովեալ էաք յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուբն քաղաք»¹⁾. Այլ ժողով Բարդէնի օրով գումարուած և այլ տեղ մենք չենք ճանաչում. Այդ պատճառով էլ մեր գրքում տօենք, որ ժողովը գումարուած է եղել Դուբնում. Այդ ժողովի տեղի մասին վէճ ուրեմն լինել չի կարող. Բայց ոչ միայն տեղի, այլ և ժամանակի մասին խնդիր յարուցանելը յառաջ է գալիս գործին լաւ տեղեակ չլինելուց Զնայելով Զամասպի ապստամբութեան ու Կաւատի թագաւորութեան ընդհատուելուն, Կաւատի ԺԼ. տարին այնուամենայնիւ պէտք է հաշուել 506-ը, և ոչ երբէք 510։

Զարմանալի է, որ Կաւատի թագաւորութեան համար վկայութեան կոչելով Նեօլդեկէին, Մխիթարեան հայրերը չեն հետաքրքրուել տեղեկանալու նրա կարծիքը հէնց իրենց շօշափած խնդրի մասին։ Եթէ նոքա այդ արած լինէին, նախ սխալից ազատ կմնային և ապա՝ այնպէս վստահ և վճռական կերպով չէին պիդի, թէ «հիմակուան ժամանակս յայտնի բան է և որոշ գիտենք, թէ ինչպէս գործածած են Պարսկաստանեայք և մեր Հայք, այսինքն՝ թողլով մէկդի Զամասպայ թագաւորութեան 4 տարին, հաշ-

1) Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս, Գիրք Թղթոց, էջ 42.

ուելով միայն իւր կտռավարութեան տարիները ։ Զէին
պնդի և խնդիր ամենեին չէին յարուցանի, ասում ենք,
որովհետեւ կտեսնէին, որ Կաւատը ինքը այդ 4 տարին
հաշուել է և հոգ է տարել, որ այդպէս էլ հաշուեն իւր
հպատակները։ Բայց աւելի լաւ է, լսենք Նեօլդեկէին¹։
Նրա ասելով Կաւատը մեռել է 43 տարի երկու ամիս
թագաւորելուց յետոյ, 531 թուականի սեպտեմբերի 13-ին։
43 տարի երկու ամիս իշխանութիւն է վերագրում նրան
Մալալան և աւանդութիւնն էլ համաձայն է նրա հետ
Աւելի կարեոր նշանակութիւն ունի սակայն այն, որ նրա
թագաւորութեան տարեթուերը իւր գրամմերի վրայ յիշ
րաւի մինչև 43 համառմ են։ «Այդպիսով նրա առաջին
տարին կլինի 488 թուականի յուլիսի 22-ին սկսուողը։
Նրա թագաւորութեան միջոցին են ընկնում նաև իւր եղբօր
ու հակառակորդի՝ Զամասպի տարիները։ Արա գրամմերը
կրում են 1—3 տարեթիւր. գրանով նա կամենում էր որոշ
կերպով իւր իշխանութիւնը իբրև նոր, անկախ ցոյց տալ։
Բայց հէնց որ Կաւատը նորից սապարիզի վրայ երեաց,
իսկոյն իւր գրամմերի վրայ էլ տարեթուեր նշանակեց,
որով նա սեպհականեց Զամասպի տարիները և նրան յայ-
տարարեց այդպիսով բռնապետ։ Այդ հաշիւը (գրամմերի
վրայ) սկսում է նրա 11-րդ տարով և ինչպէս ասացինք,
գնում է մինչև 43-րդը։ Նրա 11-րդ տարին կլինէր ուրեմն
498 թուի յուլիսի 20-ին սկսուողը, որ և հաւատար կլինէր
Զամասպի Պ. տարուան։ Զամասպի Ա. տարին այդպիսով
կլինի 496-ի յուլիսի 20-ին սկսուողը² ։

1) Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden.
Aus der arabischen Chronik des Tabari übersetzt und mit ausführlichen
Erläuterungen und Ergänzungen versehen von Th. Nöldeke. Leyden,
1879. Excuse. I. Chronologie der Sasaniden, էջ 427—428.

2) Kawâdh starb . . . nach einer Regierungszeit von 43 Jahren
und 2 Monaten am 13. September 531, 2 Monate nach dem Beginn
des neuen persischen Jahres . . . 43 Jahr giebt ihm auch die gewöhn-
liche Überlieferung, und bis 43 gehen die Jahreszahlen auf seinen
Münzen. Sein erstes Jahr ist also das am 22. Juli 488 beginnende.

Կաւատից առաջ նոյն կերպ վարուել է Պերողը, որի դրամների վրայ առաջին անգամ՝ տարեթուերը հանդէս են դալիս, սեպհականելով Հորմիզդ III-ի երկու տարին, թէև ինքը դեռ թագաւոր չէր, այլ միայն թեկնածու արքայական դահիւ թէև նա 459 թուին է արքայից արքայ դառնում, բայց այդ թուականը հաշում է իւր Գ. տարին, դահակալութեան սկիզբն ընդունելով 457-ին:

Ուրեմն, այս բոլորից յետոյ ոչ մի կասկածի խնդիր լինել չէ կարող Դուբինի ժողովի թուականն ես. ժողովը տեղի է ունեցել Կաւատի Ժ. տարին, որ թէ Կաւատի, թէ ժամանակագիրների և թէ ամեն տեսակ հաշուով կլինի 506 ԹՈՒԱԿԱՆԸ և ոչ թէ 510-ը:

In seine Zeit hinein fällt nun die seines Bruders und Rivalen Gämäsp. Die Münzen desselben zeigen die Jahreszahlen 1—3; er wollte somit ausdrücklich seine Regierung als eine neue, selbständige hinstellen. Aber als Kawâdh wieder auf dem Schauplatz erschien, versah er seine Münzen auch mit Jahreszahlen, wodurch er sich die Jahre des Gämäsp aneignete und diesen für einen Usurpator erklärte. Diese Zählung beginnt mit seinem 11. Jahre und geht dann, wie gesagt, bis an sein 43-stes. Sein Jahr 11 ist das am 20. Juli 498 beginnende. Die Münzen dieses Jahres scheinen sehr selten zu sein; er hatte damals wohl erst einen Teil des Reiches in Händen, und das Jahr ist vermutlich dasselbe, welches sein Bruder als sein drittes zählt ».

Նեօլդեկէն մինչև անգամ ծանօթութեան մէջ (լ.ջ 427) զարմանք է յայտնում, որ ուրիշ կերպ մտածողներ կան. «Es ist seltsam, dass Mordtmann als möglich annehmen kann, ein orientalischer Fürst in der Lage Kawâdh's habe für die Zeit seiner Ausschliessung vom Thron den Rivalen nachträglich als legitim anerkannt. Dass die Datierung der Münzen eben von seiner Wiedereinsetzung an einen bestimmten Zweck hat, grade wie die bei Pêrôz und bei Gämäsp, ist doch deutlich. Die chronologische Feststellung des Todesjahres von König Pêrôz entzieht jener Annahme allen Boden ». 484-ի յունուար 14-ին արեի լիակատար խաւարումն է եղիլ, ինչպէս պատմում է Եղիա ժամանակագիրը (Anm. zu Barh. Hist. eccl. II, 65) և այդ ժամանակ մեռել է Պերողը: Նրան տալիս են ումանք 24—25 և մեծ մասամբ 27 տարի, հաշուելով եղբօր երկու տարին ես նրա վրա: Եթէ 24/25 հաշուենք կատանանք, սկիզբը 459-ին, իսկ եթէ 26 կամ 27, 457-ին. (Հմմտ. գերեզ):

Անցնենք այժմ միւս խնդրին՝ Հ. Ն. Ակինեանն ասում է, թէ «Բարգէնի Բ. թղթի մէջ ևս կտեսնուի ժողով մը, որովհետեւ թուղթը կառաքուի կաթուղիկոսէն, եպիսկոպոսներէն ըստ գաւառաց և ըստ տանց, յամենայն ուխտէ Ա. Եկեղեցւոյ մերօյ և յիշխանաց . . .» և այլն. ապա Բ. թղթի դրութիւնն ու «Ժողովը» դնում է 514—515-ին (1904-ին դրած յօդուածում Հանդ. ամս. Էջ 211), այն ինչ Բարգէնի կաթուղիկոսութիւնը դնում է վերջին յօդուածում (Հանդ. ամս. 1908. Էջ 169) 506/07—512/13։ Այստեղ պէտք է նկատենք, որ Հ. Ն. Ակինեանը սխալում է, կարծելով թէ Բարգէնի Բ. թուղթն ևս ժողովական թուղթ է, եթէ այդ թուղթը որ և է ժողովում գրուած լինէր, անպատճառ յիշուած կլինէին թղթի սկզբում կամ վերջում անուն անուն բոլոր ներկայ եպիսկոպոսները, ինչպէս այդ սովորութիւն է այդպիսի թղթերի մէջ։ Այստեղ թղթին ստուրագրել են հոգեորականներից միայն Բարգէն կաթուղիկոսը և իւր գլուխոր աթոռակիցը։ Տարօնի եպիսկոպոս Մերշապուհը, անշուշտ ամբողջ Հայոց եկեղեցու կողմից Ամբողջ նամակում և ոչ մի ակնարկ կամ խօսք որ և է ժողովի մասին։ Հ. Ն. Ակինեանին սխալեցնողը «Եւ այլոց եպիսկոպոսաց Հայոց որք ըստ գաւառաց և ըստ տանց» խօսքերն են, որոնք սակայն նշանակութիւն ունենալ չեն կարսղ, քանի որ եպիսկոպոսների անունները չկան, որ անհնարին կլինէր, եթէ որ և է ժողովում խմբագրուած լինէր այդ թուղթը։

Բոյց այս խնդիրը երկրորդական է. շատ աւելի կարեւոր է Հ. Ն. Ակինեանի միւս ենթադրութիւնը, որի համաձայն մի ուրիշ ժողով պիտի գումարած լինի Բարգէնը 512/13-ին Վաղարշապատու, ուր հայերը մերժել են Քաղկեդոնի սահմանը և ընդունել Զենոնի Հենոտիկոնը։ Տեսնենք թէ այդպիսի մի ժողով ընդունելու հիմք կայ, և կարեւոր է այն որ և իցէ խնդիրը բացատրելու համար։ Հ. Ն. Ակինեանը գրում է¹⁾. «Ժողովոյն ներկայ էին.

1) Հանդ. Ամս. 1908. Էջ 169.

Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով, Աղուանից և Սիւնեաց եպիսկոպոսները և այլ բազմաթիւ ազատութեար (Գիրք թղթոց 177), Վրաց եպիսկոպոսաց անունները պահուած են, թէպէտ «ի կարի ծածուկ և այլաձեք», Արքահամ կաթուղիկոսի առ Կիւրիոն երրորդ թղթին մէջ (Գիրք թղթոց, 182—183, հմմտ. Ռւխտանէս Բ. գլ. Ծ)։ Այն հանգամանքը ուրեմն գլխաւորապէս, որ Վրաց կաթուղիկոսը իւր 24 եպիսկոպոսներավ չէ յիշուած Բարգէնի 506-ի ժողովական թղթի մէջ, իսկապէս առիթ է տուել Հ. Ն. Ակինեանին, և ինչպէս մեզ յայտնի է, նաև ուրիշներին, մի Բ. ժողով էլ ենթագրելու, յատկապէս մասնակցութեամբ Վրաց և Աղուանից Մենք կտեսնենք, որ այդպիսի ժողով ընդունելու հիմքերը ոչ միայն բոլորովին խախուտ են, այլ գլութէ գոյութիւն չունին։

Այդպէս՝ ասում են, որ այդ ժողովը գումարուած պիտի լինի 506-ի ժողովից յետոյ և ոչ թէ Դուինում, այլ Վաղարշապատում։ Ժողովի տեղը Վաղարշապատն ընդունելու վկան գլխաւորապէս Յովհաննէս կաթուղիկոսն է, որ հետեւալն է ասում. «Բարգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի նոր քաղաքի ի սուրբ կաթուղիկէին, ի մայրն եկեղեցեաց Հայոց¹⁾։ Յայտնի չէ մեզ, թէ ինչ հիման վրայ Հ. Ն. Ակինեանը այդքան մեծ նշանակութիւն է տալիս Յովհաննէս կաթուղիկոսի վկայութեանը։ Մենք նրան այդպիսի նշանակութիւն տալ չենք կարող, որովհետեւ բաւական է Յովհաննէս կաթուղիկոսից միայն 2 երես կարդալ, հէնց թէկուղ յիշուած 36 և 37 երեսները, համոզուելու համար, թէ որչափ ճշմարտապատում է նա։ Օրինակ Վարդան Մամիկոնեանի ապօտամբութիւնն ու Սուրէն մարգանի սպանութիւնը Դուինում և Հայ նախարարների Յունաց երկիր Փախչելը դնում է Ղեղնդ կաթուղիկոսի օրով 530-ական թուականներին, այն ինչ ժամանակակից Յովհաննէս Եփեսացի պատմիչն ասում է, որ այդ գէպքի եղել է 571 թուին և Յովհաննէս Բ. Գա-

1) Յովհ. կաթուղիկոս, էջ 36.

բեղենցու օրով, որ նոյնպէս կ. Պօլիս է փախել, պատմել Յովհաննէս Եփեսացուն ամբողջ ապստամբութեան մանրամասնութիւնները և Երկու տարուց յետոյ մեռել ու թաղուել կ. Պօլսում։ Այսպէս որ Յովհաննէս Պատմաբանը մեր կարծիքով վատահելի ազբիւր համարուել չէ կարող։

Միւս ազբիւրը, որ խսկապէս աւելի գեր է կատարել Վաղարշապատը Բարդէնի ժողովի տեղն համարելու մէջ, Յովհան Օձնեցուն վերագրուող «Սակս ժողովոց», որ Եղէնի Հայք¹⁾ գրութիւնն է, որի մէջ կարդում ենք. «Հինգեւրորդ ժողով արար Բարդէն ի Քաղաքուդաշտի, ի յ Ժ. Ե. Երորդ ամի թագաւորութեանն կաւատայ արքայի, յաղագո չար հերձուածոյն Ակակայ և Բարսումայի, որք պեղծ աղանդաւն վարժեալ անիծեալ ախտիւն ախտիւն նեստորի, ջանային շիջուցանել զուղղափառ հաւատս կողմանց արենելից, և տնկել զժանդացեալ որոնն գաղձին վնասակարի նեստորի անիծելոյց Վասն որոյ գիր արարեալ Տէր Բարդէն, սահման կապելով, թէ իւ պատրեալ խաբեսցեն զծեզ բանք դոցա, քանզի մեք Հայք, Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ հաստատեալ ճշմարիտ հաւատովի իւ անդրա զոր, զոր աւանդեցին մեզ ա. հարքն յերիս ժողովս. ոչ ընդունիմք զայդպիսի բանս հայ հոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանի սորա, և ևս մանաւանդ, որք կցորդին զինի պիղծ աղանդոյն նոցա, նզովեալ եղիցին, և ի սրբոյ եկեղեցւոյ արտաքս մերժեսցին²⁾։

Խնդիրը այստեղ սակայն չափազանց պարզ է։ Ի՞նչ է հասկացել «Սակս ժողովոց»-ի հեղինակը Քաղաքուդաշտասելով, արդեօք անպատճառ Վաղարշապատ, թէ գուցէ Դուիննն էլ այդպէս կոչուել է, որոշ կերպով ասել չենք կարող։ Յամենայն դէպս յետագաների բերանում Քաղաքուդաշտը Վաղարշապատն է։ Բայց այնուամենայնիւ արեի

1) Գիրք Թղթոց, էջ 220—233.

2) Գիրք Թղթոց, էջ 220—221.

նման պարզ է, որ «Սակս Ժողովոց»-ի հեղինակի յիշած Բարգէնի ժողովը և Բարգէնի Ա. թղթի մէջ յիշուածը բոլորվին նոյնն է, Այդ բանը երեսում է ոչ միայն նրանից, որ երկուսի մէջ էլ ժողովի թուականը յատկապէս յիշուած է կաւատի մի. տարին, այլ նաև նրանից, որ ժողովի նիւթն ևս երկու ազգիւրների մէջ միևնոյնն է՝ Նեստորականների, Ակակի և Բարձումայի խնդիրը Պարսկաստանում։ Մինչև անգամ Բարգէնի նամակից գրեթէ բառացի կտոր կայ մէջ ըերուած «Սակս Ժողովոց»-ի մէջ։

Բարգէնի թուած¹⁾.

Սակս Ժողովոց²⁾.

«Եւ զի կամեցայք ի մէնջ մասն նորին իրաց ուսանել. ժանուցանեմք ձեզ, եթէ Հոռոմը և մեք Հայք, և Վիրք և Աղուանք դհայհոյութիւնս զայս ոչ ընկալաք և ոչ ընդունիմք և ոչ հազորդիմք և ոչ հաւատամք, այլ և նզուվեմք, որ այսպէսն ասեն և ուսուցանեն»։

«Գիր արարեալ Տէր Բարգասն նորին իրաց ուսանել. գէն, սահման կապելով, թէ իւ պատրեալ խարեսցեն զձեզ բանք դոցա. քանզի մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամք եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լուանդր, զոր աւանդեցին մեզ սուրբ հարքն յերիս ժողովսն. ոչ ընդունիմք զայդպիսի բանս հայհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա»։

Կարծում ենք, որ մեր ասածի ճշտութեան մասին ոչ մի կասկած այլ ևս լինել չի կարող, ժողովը եղել է Դուինում. և եթէ «Սակս Ժողովոց»-ի հեղինակը Քաղաքուդաշտում կամ Վաղարշապատում է գումարուած համարել այդ ժողովը, խոշոր սխալ է արել, քանի որ Բարգէնի թղթի մէջ, ինչպէս վերև տեսանք, որոշ կերպով Դուինն յիշուած է իրեւ ժողովատեղի».

Հ. Ն. Ակինեանը Հանդ. Ամս. 1908. էջ 169 շար. Վերջին ծանօթութեան մէջ աւելացնում է հետեւեալը.

1) Գիրք Թղթոց, էջ 46.

2) Գիրք Թղթոց, էջ 221.

* մաղովքիս (իման նրա կարծիքով 512/13-ին վազարչապատճեմ գումարուած ժողովը Վառաց հետ միասին) ծանօթ կերեայ Բեթ-Արշամացի Սիմէօն եպիսկոպոսը, երբ կդրէ Անաստաս կայսեր օրով, թէ Հենոտիկանն կընդունին և իւր հաւատքին կհետեւին այժմ և ունին յայտնի Վրաստանի (Gutzan) 33 եպիսկոպոսք իրենց թագաւորներու և նախարարներու հետ, ինչպէս և Պարսկահայոց 32 եպիսկոպոսք իրենց մարզպաններու հետ. Assemani Bibl. Or. I, 355 »:

Զարմանալի է, որ Հ. Ակինեանը այդ տեղեկութեանը ծանօթ լինելուց յետոյ էլ սխալների մէջ է մնում և չի կարողանում ուզիղ եզրակացութիւնը գանել Սիմէօն Բեթ-Արշամացին յայտնի է իրբեւ Նեստորուկանութեան ամենակատաղի հակառակօրդ, որ ոտքի տակ է տուել ամբողջ Պարսից պետութիւնը յոյներից, հայերից և ասորիներից վաւերաթղթեր հաւաքելու, որ նրանք հեռու են Նեստորի վարդապետութիւնից¹⁾. Մենք արդէն ապացուցել ենք, որ Սիմէօն Բեթ-Արշամացին յիրաւի Հոյաստան էլ եկել է Բարդ էնի կաթողիկոսութեան օրով, երբ հայերը Կաւատի ԺՌ. տարին, 506 թուին, ժողովի էին հաւաքուած Դուինում, յիշուած է Բարդ էնի Ա. թղթի մէջ իրբեւ « Եմաւոն Բերդումայ երէց²⁾, հայերից էլ դաւանական թուղթ է վերցրել, որ նրանք հեռու են Նեստորականութիւնից և որ այդ դաւանական թուղթը հէնց մեր ձեռքն հասած Բարդ էնի Ա. թուղթ համարուածն է³⁾. Ուրեմն Սիմէօն Բեթ-Արշամացին աչ միայն ծանօթ է հայոց մի ժողովի, այլ անձամբ իրբեւ Պարսից ուղղափառութերի կողմից ուղարկուած մի ժարդ ներկայ է եղել ժողովին, Բայց այդ ժողովը աչ 512/13-ին է եղել և աչ էլ վաղարշապատուած, ոյլ Դիենին նիւ ել 506 թուին։ Ու և իցէ կասկած յա-

1) Հմմ. Barhebr. Chron. eccl. III, 85 կամ մեր Die armenische Kirche, էջ 35.

2) « զ » և « ր » բաղաձայների տեղափոխութիւն.

3) Տես այդ բոլորի մասին մեր⁴⁾ Die armenische Kirche etc. էջ 34—39, յատկապէս 34—36.

բուցանել այդ մասին թէ անհնարին է և թէ անտեղի,
քանի որ ժողովի վաւերաթուղթն է մեր առաջ։

Ապա լուրջ ուշադրութեան արժանի է նաև այն հանգամանքը, որ Բարդէնը հէնց իւր Ա. թղթում, 506-ին գրած, չեշտում է Հայերի, Հոռոմների, Վրացիների և Աղուանների համաձայնութիւնը դաւանութեան ինդրում։ Եթէ հայերը, վրացիները ու աղուանները համաձայն են հոռոմների հետ, այդ կարելի է միայն այն մոքով հասկանալ, որ Զենոնի Հենոտիկոնը ընդունելութիւն է գտել արդէն այդ երկիրներում։ Ուրիշ կերպ հասկանալ անկարելի է այն պարզ պատճառով, որ Քաղկեդոնի դաւանութիւնը կայ մէջ տեղ։ Եզրակացութիւնն այն է ուրեմն, որ 506 թուից առաջ արդէն կամ գոնէ ամենաուշը այդ թուին Հայերը, Վրացիք և Աղուանները պէտք է Զենոնի Հենոտիկոնը ընդունած լինին և Հոռոմների հետ համաձայնած։ Վերև յիշեցինք, որ Սիմէօն Բեթ-Արշամացին տեղեկութիւն է տալիս, որ Հայերն ու Վրացիք, առաջինները 32 եպիսկոպոսներով, վերջինները 33 եպիսկոպոսներով ընդունել են իւր ժամանակ Զենոնի Հենոտիկոնը¹⁾։ Մեր կարծիքով այդ բոլորը տեղի է ունեցել Բարդէն կաթուղիկոսի ժողովում, 506 թուին, Դուինում։

Այս պարզ և շատ հաւանական ենթադրութիւնը շատերի համար կասկածելի է թւում միայն այն պատճառով, որ Բարդէնի Ա. թղթում չի յիշուած ամենին Զենոն կայսեր միութեան հրովարտակը մի կողմից, իսկ միւս կողմից չեն յիշուած անուն անուն նաև Վրացիք և Աղուանները, որոնք ներկայ են եղել ժողովին։ Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ այդ չյիշուելը իւր պարզ ու հասկանալի բացատրութիւնն ունի։ Պարսկաստանի «ուղղափառ» (իմա միարնակ) քրիստոնեաների մէջ մեծ յուղումն էր ընկել Ակակի ու Բարծումայի, առհասարակ ամբողջ նեստորական շարժման պատճառով, որովհետեւ Նեստորականները Հոռվմէական

1) Epistola Simeonis Beth-Arsamensis de Barsauma, episcopo Nisibeno. Assemani, Bibl. Orient. I, 355.

պետութիւնից քշուելուց յետոյ Պարսկաստան էին ազաւինել։ Այստեղ կարիք էր զգացուել իմանալու, թէ ի՞նչ դիրք են ըռնել հարևան եկեղեցիները դէպի Նեստոր ականութիւնը և այդ պատճառով էլ Պարսկաստանից մի քանի հոգեսրականներ էին ուղարկուել, ի թիւս որոց և յայտնի Սիմեօն Բեթ-Արշամացին, հարևան եկեղեցիներից, ուրիշն նաև հայերից, գաւանութեան թուղթը բերելու Այդ մարդիկը Դուին են հասնում այն ժամանակ, երբ Բարդէնի ժողովն էր. և Հայոց կաթուղիկոսը իւր եսլիս կոպոսներով նրանց հականեստորական գաւանական գիր է տալիս Խնդիրն այնքան պարզ է և բնական, որ ուրիշ կերպ սպասել էլ չի կարելի և ամենայն զարմանալի էլ չէ Հենոտիկոնի շյիշուելը Բարդէնի թղթում։ Թուղթը գրուած է որոշ նպատակով և որոշ խնդրի համար և այդ խնդրից գուրս ոչնչի մասին չի խօսում։ Զպէտք է մոռանալ, որ Բարդէնի թղթում մինչև անդամ չէ յիշուած, թէ ինչու համար էին հաւաքուել այդչափ եպիսկոպոսներն ու իշխանները Դուինում¹⁾, անշուշտ այն պատճառով, որ այդ գուրս էր Պարսից «ուղղափառներին» գրած թղթի բովանդակութեան շրջանակից։ Կասկած չլայ, որ ժողովը Պարսից քրիստոնեաների տարակուսանքները լուծելու համար չէր. ժողովը արդէն գումարուած էր, երբ նրանց պատգամաւորները Դուին հասան։ «Վասն զի ԺԸ. ամի կաւատայ արքայից արքայի, մինչդեռ ես Բարդէն Հայոց եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք ժողովը կեալ էաք յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուին քաղաք, եկեալ հասին առ մեզ արք ոմանք, որք ասացին զինքեանս լինել ի կողմանց յայդցանէ, ի Տեսրոնէ և ի Գարմիկանէ և ի Վեհարտաշիր նահանգէ . . .²⁾։

Ուրիշն ժողովի գումարման պատճառներն այլ էին. իսկ այդ պատճառները կարող էին լինել մի կողմից ներ-

1) Հմմատ. Գիրք Թղթոց, 41—42.

2) Գիրք Թղթոց, 42.

քին խնդիրները, միւս կողմից Հենոստիկոնի ընդունելու թիւնն ու գրանով Քաղկեդոնի որոշումների լոելեայն մերժումը¹, ինչպէս տեղեկացնում է մեզ Սիմեօն Բեթ-Արշամացին, թէ այդ ժամանակ Հայերն ու Վրացիները ընդունել են Հենոստիկոնը. Որ Քաղկեդոնականութիւնն աիշառակուած չէ որոշ կերպով, ոչինչ չէ ապացուցանում. Դուինի Բ. Ժողովի (554) ժողովական թղթի մէջ էլ չէ յիշառակուած այն, այլ խօսւում է Նեռտօրականութեան մասին միայն, թէեւ պարզ է, որ Քաղկեդոնականութիւնն ևս վերջնականապէս մերժուած է այդ ժամանակներից սկսած². Դրա պատճառն այն է, որ Զ. գարումն առհասարակ, միտքնակները «Նեստորական» տեղով մեծ մասամբ «Քաղկեդոնական» էլ են հասկացել և երկու անունները միմեանց փոխարէն անխտիր գործածել. Քաղկեդոկանութիւնը ոչ առանց որոշ իրաւունքի համարելով վերադարձ գէպի Նեստորականութիւնը³.

Մնում է պատասխանել վերջին խնդրին. Եթէ յիրաւի Բարգէնի 506-ի ժողովում, Դուինում, ներկայ են եղել նաև Վրաց և Աղուանից եպիսկոպոսները, ուրեմն Արքահամի Դ. թղթում առ Կիւրիոն⁴ յիշուած ժողովը նոյն է, ինչ որ 506-ի ժողովը Դուինում, ինչպէս մենք իրեւ շատ հաւանական ենթագրում ենք, հապա ինչպէս է, որ Բարգէնի թղթում «ի Պարսս առ ուղղափառս» չեն յիշուած Վրաց և Աղուանից եպիսկոպոսները. Այդ հանգամանքը, որ շատերին դժուարացնում է ենթադրեալ ժողովները նոյնն համարելու և թիւրիմացութիւնների տեղիք է տալիս, մեր կարծիքով նոյնպիսի հեշտութեամբ վերանում է, ինչպէս բոլոր միւսները. Պարսկաստանից եկած պատգամաւորները

1) Տես մեր Die armen. Kirche, էջ 31 շար.

2) Տես Գիրք Թղթոց, 72—75. և մեր Die armen. Kirche, 46.

3) Հմատ. G. Krüger, «Monophysiten» ընդարձակ յօդուածը գերմանական Realenzyklopädie für protest. Theologie und Kirche-ի մէջ, 3-րդ հրատարակութիւն, համոր. 13. էջ 399:

4) Գիրք Թղթոց, 180—184.

կամենում էին Հայերից դաւանութեան գիր վերցնել և
ամենեին կարիք չկար, որ Հայերի տուած դաւանական
գրին (Բարգէնի Ա. թուղթ համարուածը, Գիրք Թղթոց,
41—47), որ «Հաւատոյ նամակ» է կոչում, ստորագրէին
նաև Վրաց և Աղուանից եպիսկոպոսները։ Աբրահամ կա-
թուղիկոսի Գ. թղթի մէջ էլ առ Կիւրիոն անուն անուն
յիշուում են միայն Վրաց եպիսկոպոսները, որովհետեւ այս
գէպքում միայն այդ էր կարևոր, առանց հայերի և ազուա-
նից եպիսկոպոսների յիշատակութեան։ Այդ՝ այս երանելի
եպիսկոպոսունքս, որ յաշխարհէ ձերմէ էին, և ընդ
Աղուանիւք և ընդ Աիւնիւք ի Հայս գիպեցան յա-
ռուրս Բարկենայ Հայոց կաթուղիկոսի, յայն ժողովն, յու-
րում անիծաւն ի նոցանէն միարանութեամբ ժողովն Քաղ-
կեդոնի և տումարն Աւոնի¹⁾ ինչպէս որ այսուել կարեւոր
չէ համարուել մէկ մէկ գրել բոլոր հոյ, վրացի և աղօւան
եպիսկոպոսների անունները, որովհետեւ խօսքը միայն վրա-
ցիներին է վերաբերում, այնպէս էլ Բարգէնի նամակում
կարեւոր չեն համարել գրելու Վրաց և Աղուանից եպիս-
կոպոսների անունները, որովհետեւ այդ նամակը գրուած է
ՄիԱՅՆ Հայերի կողմից։

Ամենեին կարեւոր չէին Վրաց և Աղուանից եպիսկո-
պոսների անունները Բարգէնի Ա. թղթում ոչ միայն այն
պատճառով, որ թուղթը գրուած էր Հայերի կողմից, այլ
մանաւանդ այն, որ ինչպէս մի քանի ակնարկներ ու տե-
ղեկութիւններ ցոյց են տալիս, Պարոկաստանից եկած
պատգամաւորները նոյնպիսի դաւանութեան գիր, ինչպէս
Հայերինն է, վերցրել են նաև միւս ազգերից՝ վրացիներից
և աղօւաններից։ Աբրահամի Գ. թղթի մէջ առ Կիւրիոնին
յիշուում է, որ ժողովում «պայման նամակ» են տուել միւ-
մեանց հաւատոյ վերաբերեալ իւրաքանչիւր տղթ իւր լեզ-
ուով²⁾։ Եւ զի պայման նամակն, որ Հայերէն գրով էր,
յապստամբութեանն կորեաւ, և թարգմանեցաւ այս յմւր-

1) Գիրք Թղթոց, 183.

2) Գիրք Թղթոց, 183.

Հայ քաղաքի ի Հոռոմ գրոյ. քանզի և նոքա ունեին ի մէնջ՝ և ստոյգ և սուրբ, որպէս արժան էր, չկարացին թարգա մանել, զի են, որ քաջ յայտնի են եպիսկոպոսացդ և եպիսկոպոսարանացն անուանք, և են որ կարի ի ծածուկ և այլաձիք Բայց թէ կամիք անուամբը եպիսկոպոսացն և յաջորդաւք տեղեացն և այլաձե անուամբը եպիսկոպոսացդ՝ որպէս գրեալ են, կարէք զստոյգ անուանս եպիսկոպոսարանացն գտանել, և զայլոցն ևս, քանզի և մեք զմերս, այդ տարազու մարթացմք գտանել, և մանաւանդ թէ զպայման նամակն իսկ գտանիցէք ձերով գրով»։ Բայց այս պայման նամակը տրուած է փոխադարձարար միմեանց, ինչպէս ասացինք, և ոչ թէ Պարսից «ուղղափառների» պատգամաւորներին։

Ստկայն Բարգէնի Բ. թղթում «ի Պարսս առ Ռւզզափառս¹⁾ մի քանի խօսք կայ պահուած, որ մեզ միանգաւ մայն հասկանալի է կացուցանում, թէ ինչու Վրաց և Աղուանից եպիսկոպոսները չեն յիշուած Հայոց հաւատոյ նամակի մէջ։ Այդ կտորը, որ վրիպել է տարբեր ժողովներ ընդունողների ուշադրութիւնից, հետեւեալն է, «... Այսուիկ վարիմք հաւատովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յաւածագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իիրԱթԱնջիկ ԱՇԽԱՐՀԻ գրով, եւ այժմ զնոյն երկրորդեցաք ի ձեռն հասարակաց եղբօր ըստ հաւատոյ՝ Սիմէովսի նախանձաւոր երիցու, զի մի ոք համարձակեցի յայսմ հակառակել և ընդդիմանալ պատճառաւ առ ի մէնջ²⁾։

Այս պարբերութիւնը, յատկապէս «իւրաքանչիւր աշխարհի գրով» խօսքերը, պարզ և անվիճելի կերպով ապացուցանում են, որ Բարգէնի Ա. թղթի հետ միասին Դուինի 506-ի ժողովի մասնակից Վրաց և Աղուանից եպիսկոպոսներն էլ առանձին առանձին «Հաւատոյ նամակ» են տուել Պարսից «ուղղափառների ներկայացուցիչներին»։

1) Գիրք Թղթոց, 48—51.

2) Գիրք Թղթոց, 51.


իրենց ստորագրութիւններով վաւերացրած, ինչպէս մեր ձեռքն հասած Հայոց նամակն է, կամ Յաբդէնի Ա. թուղթը Այդ հասկանալի պատճառով էլ Հայոց նամակում չեն յիշատակուած Վրաց և Աղուանից եպիսկոպոսների անունները, ինչպէս և նրանց տուած թղթերում չեն լինի Հայոց եպիսկոպոսների անունները:

Այդպիսով մենք ինդիրը համարում ենք վերջնականապէս պարզուած և անվիճելի կերպով ապացուցուած:

Հայոց Յաբդէն կաթուղիկոսը, մեզ հասած բոլոր աղբիւրների տուած տեղեկութիւնների համաձայն, գումարել է միայն Մի ժմուգով ԳՈՒԽՆՈՒՄ, և ոչ մի ժողով Վաղարշապատում, իսկ այդ միակ ժողովը կայացել է անկասկած 506 թ. ՈՒԽԱԿԱՆԻՆ, Վրաց և Աղուանից մասնակցութեամբ, և այն ժողովն է, որ յիշում է նաև Արքահոմ կաթուղիկոսի Գ. թղթի մէջ առ Վրաց կիւրիսն կաթուղիկոսը:

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՇԱՍԻԱՆՑ

26 Յունիսի 1908.



ՏԻՄՈԹԵՈՍ ԿՈՒԶԵ ՄԱՍԻՆ

Լրացուցումն եւ ուղղելիք

Արարատում տպած յօդուածում (համար Մայիս—Յունիս) կարեսոր եմ՝ համարում ուղղել հետեւալները:

1. Էջ 572, տող 3, «552—556 քառամետկին» պիտի լինի «552—555 քառամետկին», ինչպէս որ է մի քանի տող ներքեւում (Արտատպութեան մէջ արդէն ուղղուած):

2. Էջ 576, տող 13, «25, 29 կամ 30 օգոստոսի» պիտի լինի «24, 29 կամ 30 օգոստոսի». (արտատպութեած):

3. Էջ 587—588, § 21, (արտատպ. Էջ 27, տող 1—6), պիտի գուրս ձգուին հետեւալ 6 տողերը, «Այս սահմանը կարելի է աւելի ևս սեղմել—վաթսունական թուերին» Այստեղ տեղի է ունեցել աւելի կոպիտ թիւրիմացութիւն,